Քրիստիան Միշել Տեր-Ստեփանյան

Ծնվել է 1951թ. օգոստոսի 21-ին, Ֆրանսիայում:

Կրթությունը՝
Փարիզի VII համալսարան, Բանասիրության և պատմության ֆակուլտետ:

Աշխատանքային գործունեություն՝
2017 թվականի մարտի 29-ին ընտրվել է Ֆրանկոֆոնիայի մշտական խորհրդի Քաղաքական հանձնաժողովի փոխնախագահ 2016-2019թթ. ժամանակահատվածի համար և Երևանի Գագաթաժողովի կողմից ընդունվելիք փաստաթղթերի խմբագրման հանձնաժողովի նախագահ,

2015-2017թթ. Կենտրոնական և արևելյան Եվրոպայի ֆրանկոֆոնիայի Ազգային համակարգողների ցանցի նախագահ (RESIFECO),

2015-2017թթ. Ֆրանկոֆոնիայի մշտական խորհրդի համագործակցության և ծրագրավորման հանձնաժողովի նախագահ,

2014–2015թթ. Ֆրանսիայի ֆրանկոֆոն դեսպանների խմբի նախագահ (ՖՖԴԽ/G.A.F.F.), ՖՖԴԽ-ի ղեկավար մարմնի անդամ մինչ օրս,

2013 թվականի սեպտեմբերի 1-ից ՀՀ նախագահի անձնական ներկայացուցիչ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունում, Փարիզ,

2008-2013թթ. Ֆրանկոֆոնիայի հարցերով ՀՀ արտաքին գործերի նախարարի խորհրդական,

2006-2007թթ. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի միջմշակութային երկխոսության կրոնական ուղղվածության հարցերով Աշխատանքային խմբի նախագահ,

2004-2006թթ. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կրթության և մշակույթի հարցերով Զեկուցողների խմբի նախագահ,

2004-2005թթ. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի զեկուցող՝ կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարության հարցերով,

2001-2008թթ. Եվրոպայի խորհրդում Հայաստանի մշտական ներկայացուցիչ,

1999-2001թթ. Եվրոպայի խորհրդում ՀՀ ներկայացուցիչ,

1998-1999թթ. Ֆրանսիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար,

1996-1998թթ. Ֆրանսիայիում ՀՀ դեսպանության արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար,

1993-1996թթ. Եվրոպական միությունում ՀՀ առաքելության խորհրդական, այնուհետև՝ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար, առաքելության ղեկավարի տեղակալ,

1992-1993թթ. ԱԳ նախարարի խորհրդական, Եվրոպայի անվտանգության և համագործակության համաժողովում (ԵԱՀՀ) հայկական պատվիրակության ղեկավար, Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԵԱՀՀ-ի խաղաղության բանակցություններում հայկական պատվիրակության ղեկավար,

1991-1992թթ. ՀՀ արտաքին գործերի նախարարության Եվրոպայի վարչության պետ:

Դիվանագիտական աստիճանը՝
Արտակարգ և լիազոր դեսպան:

Օտար լեզուների իմացություն՝
Ֆրանսերեն, անգլերեն:

Շքանշաններ՝
2018 թվականի հունիսի 27-ին պարգևատրել է Պլեյադի՝ Ֆրանկոֆոնիայի և մշակույթների երկխոսության հրամանատարի շքանշանով:

2017 թվականի մարտի 1-ին պարգևատրվել է ՀՀ «Մխիթար Գոշ» շքանշանով:

Ընտանեկան կարգավիճակ՝
Ամուսնացած է, ունի մեկ դուստր:

2019 թվականի հունվարի 17-ի ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ (նստավայրը՝ Փարիզ):